http://cfoa.am

# Համայնք-ՀԱՄԱՏԵՂ

http://celog.am

ՀԱՄԱՏԵՂ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Սեպտեմբեր 2019, թիվ 5 (129)

## ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ

### Առաջին կանգառը՝ Վայք համայնք

Ինչպես եւ սպասվում էր, այս ամառն աննախադեպ «թեժ» էր Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի մի քանի տասնյակ երիտասարդների համար, ովքեր մասնակցում էին ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Տեղական ժողովրդավարության դպրոցի» (ՏԺԴ) երկրորդ՝ տարածքային (մարզային) փուլին:

Դասընթացների մեկնարկը տրվեց Վայոց ձորի մարզի Վայք համայնքում:

Ողջունելով մասնակիցներին՝ Համայնքների ֆինանսիստների միավորման նախագահ Վահան Մովսիսյանը Վայոց ձորի մարզի տարբեր համայնքներից ու բնակավայրերից ընտրված մոտ 30 երիտասարդներին ներկայացրեց դպրոցի նպատակներն ու ակնկալվող արդյունքները:

«Համայնքների ֆինանսիստների միավորման» (ՀՖՄ), «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի» (ԵՀՀ) եւ «Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի (ՏՀԶՎԿ)-ի կողմից իրականացվող ՏԺ դպրոցի հիմնական նպատակն է ՀՀ համայնքներում զարգացնել ժողովրդավարական արժեքները, պատրաստել ժողովրդավար երիտասարդներ, որոնք ակտիվորեն կմասնակցեն ՀՀ հանրային կառավարման համակարգում ընթացող բարեփոխումներին»,- նշեց ՀՖՄ ղեկավարը: Նա հավելեց. «ՏԺ դպրոցն ավարտող յուրաքանչյուր երիտասարդ, որն արդեն ձեռք է բերել անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, կարող է ստանձնել այդ առաքելությունը եւ կարեւոր դերակատարում ունենալ տեղական ինքնակառավարման համակարգում»:

Թե ինչ տեղ ու դեր ունի տեղական ինքնակառավարումը հանրային կառավարման համակարգում, ներկայացրեց ՀՖՄ փորձագետ Դավիթ Մարգարյանը:

Բանախոսն անդրադարձավ նաեւ ՀՀ հանրային կառավարման համակարգին, պետական կառավարում-տեղական ինքնակառավարում փոխհարաբերություններին: ՀՖՄ փորձագետներ Աննա Ղորուխչյանը եւ Կարեն Հովհաննեսյանն էլ անդրադարձան ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի առանձնահատկություններին, մասնավորապես, ՏԻ սկզբունքներին, ՏԻՄ-երի ձեւավորման կարգին, համայնքի աշխատակազմի կառուցվածքին եւ վերջինիս կողմից մատուցվող համայնքային ծառայություններին: ԵՀՀ ծրագրի տնօրեն Միքայել Հովհաննիսյանը խոսեց քննադատական մտածողության, առկա կարծրատիպերի, միակողմանի տեղեկատվության արժանահավատության եւ հանրային կարծիքի վրա ազդող գործոնների մասին: ՀՖՄ փորձագիտական թիմի ղեկավար Վահրամ Շահբազյանի դասախոսությունները նվիրված էին համայնքի զարգացման ծրագրերին եւ բյուջեին, որի ընթացքում ներկայացվեցին ռազմավարական պլանավորումը, երկարաժամկետ, միջնաժամկետ եւ կարճաժամկետ զարգացման ծրագրերի կառուցվածքները, մշակման ընթացակարգերը, բյուջեի տեսակները, նպատակները, դրա կառուցվածքն ու ձեւավորման սկզբունքները:

Վեցօրյա դասընթացները գերհագեցած էին ու բազմաբովանդակ, իսկ դասախոսությունների առանցքում, բնականաբար, տեղական ինքնակառավարման համակարգն էր: Հմուտ մասնագետները խոսեցին համայնքի ռազմավարական պլանավորման, իրավունքահեն կառավարման եւ վերջինիս դերի մասին՝ տեղական ինքնակառավարումն է՛լ ավելի արդյունավետ դարձնելու գործում:

էջ 4-5 ➔

## ԿԱՅԱՑԱՎ ՏԺԴ-Ի ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Հայաստանյան իրականության մեջ նմանօրինակը չունեցող կրթօջախի՝ «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ի (ՏԺԴ) պաշտոնական բացումը տեղի ունեցավ Երեւանում գարնանն անցկացված ճանաչողական միջոցառման շրջանակներում: «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ը ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի բաղադրիչն է եւ իրականացվելու է երեք գործընկեր կազմակերպությունների՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի (ՀՖՄ), «Եվրասիա համագործակցություն հիմնադրամի» (ԵՀՀ) եւ «Տեղեկատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ի (ՏՀԶՎԿ)-ի կողմից:

էջ 2 ➔

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՆԵՐՔԵՎԻՑ ՎԵՐԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Վերեւից ներքեւ փոփոխությունները տեւական չեն***

Վերջերս եռօրյա այցով Հայաստանում էր գտնվում ԱՄՆ Դեմոկրատական կուսակցության ազգային կոմիտեի նախկին նախագահ, ԱՄՆ Վերմոնտ նահանգի նախկին նահանգապետ Հովարդ Դինը: Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության համատեղ նախաձեռնությամբ ամերիկացի քաղաքական գործիչը հանդիպեց հասարակական-քաղաքական ակտիվ գործունեությամբ զբաղվող երիտասարդների հետ:

էջ 3 ➔

# ԿԱՅԱՑԱՎ ՏԺԴ-Ի ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

← էջ 1

Դպրոցի հիմնական նպատակն է ՀՀ համայնքներում ամրապնդել եւ զարգացնել ժողովրդավարական արժեքները, պատրաստել ակտիվ ու ժողովրդավար երիտասարդ մասնագետների, որոնք կունենան անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ տեղական ժողովրդավարության, տեղական ինքնակառավարման եւ հարակից գործառնական ոլորտներում, ինչպես նաեւ նշանակալի դեր կկատարեն ՀՀ հանրային կառավարման համակարգում բարեփոխումների իրականացման գործում:

Ծրագիրն իրականացվելու է մի քանի փուլերով, եւ շարունակական դասընթացների միջոցով Հայաստանի տարբեր համայնքներում պատրաստվելու են կադրեր, որոնք հետագայում իրենց ուրույն դերակատարությունն են ունենալու համայնքներում, տարածաշրջաններում տեղական ժողովրդավարության հաստատման ու զարգացման գործում:

Մայիսի 20-21-ին անցկացվեց ՏԺԴ-ի երկրորդ փուլը, որին մասնակցում էին առաջին հավաքից ընտրված 15 տարածքային (մարզային) կազմակերպիչները: Երկօրյա դասընթացի նպատակն էր զարգացնել մասնակիցների կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են ՏԺԴ-ի հետագա փուլերի՝ տարածքային դասընթացների, փոքր դրամաշնորհային ծրագրերի կառավարման գործընթացներին մասնակցելու, ինչպես նաեւ տեղական դպրոցների կազմակերպման համար:

Քանի որ երկօրյա դասընթացների հիմնաքարը տարածքային դասընթացների կազմակերպումն ու փոքր դրամաշնորհային ծրագրերն էին, բնականաբար, դասախոսություններն էլ հիմնականում վերաբերում էին նշյալ թեմաներին: Դասընթացի առաջին օրվա ընթացքում ԵՀՀ տնօրեն Գեւորգ Տեր-Գաբրիելյանը եւ ծրագրի տնօրեն Գայանե Մկրտչյանը ներկայացրեցին դրամաշնորհային ծրագրերի իրականացման առանձնահատկությունները եւ գործիքները, տրամաբանական հենքը: Այս համատեքստում բանախոսները շեշտադրեցին այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ծրագիր պետք է ունենա կենսունակություն եւ շարունակականություն, այսինքն՝ եթե գաղափար է առաջ քաշվում, այն պետք է հեռանկարային բնույթ ունենա:

Իսկ յուրաքանչյուր ծրագրի ընթացքի եւ արդյունքների մասին գնահատականներ տրվում են անցկացված մշտադիտարկման հիման վրա, որի ընթացքում կիրառվող գործիքների մասին խոսեց ԵՀՀ զարգացման տնօրեն Մարինա Այվազյանը:

Դասընթացի առաջին օրվա առանցքային թեմաներից մեկն էլ վերաբերում էր տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատելու քաղաքացիական հասարակության գործիքակազմին, մասնակցայնության մեխանիզմերին եւ համատեղ աշխատանքի հնարավորություններին, որոնց մասին մանրամասներ ներկայացրին ԵՀՀ ծրագրի տնօրեն Միքայել Հովհաննիսյանը եւ ՀՖՄ փորձագետ Դավիթ Մարգարյանը:

Մասնավորապես անդրադարձ կատարվեց տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ձեւերին եւ նշվեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում ամրագրված են 4 սեփական լիազորություններ, որոնք հիմնականում սահմանում են այն ուղղությունները, թե ինչպիսի գործունեություն կարելի է ծավալել մասնակցության բնագավառում: Խոսվեց նաեւ մասնակցության 3 կարգերի մասին, որոնք մշակվել են ՀՖՄ-ի կողմից՝ ՀամաՏեղ ծրագրի շրջանակներում:

Բանախոսները մասնակցության ձեւերն ընդհանրացրին մասնակցության 2 հիմնական ձեւերի մեջ՝ պասիվ եւ ակտիվ. առաջինի դեպքում ՏԻՄ-երը իրազեկում են բնակչությանն իրենց գործունեության մասին, երկրորդի դեպքում բնակիչները հնարավորություն ունեն ներգրավվելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը եւ որոշակի ազդեցություն ունենալու ՏԻՄ-երի կայացրած որոշումների վրա:

Օրվա ընթացքում Մանե Առաքելյանը (ՀՖՄ) եւ Լիլիթ Մարտիրոսյանը (ԵՀՀ) խոսեցին միջոցառման կազմակերպման առանձնահատկություններից՝ ներկայացնելով մանրուք թվացող յուրաքանչյուր գործառույթ, որի թերի իրականացումն էականորեն կարող է անդրադառնալ միջոցառման արդյունքների վրա:

Այնուհետեւ մասնակիցները բաժանվեցին երեք խմբերի եւ ստեղծեցին միջոցառման կազմակերպման բոլոր անհրաժեշտ բաղադրիչների ու գործողությունների ստուգաթերթ, որը հնարավորություն կտա ՏԺԴ-ի շրջանակներում իրենց հետագա աշխատանքը հաջողությամբ կազմակերպել:

Անդրադառնալով քննարկվող թեմաներին՝ դասընթացների երկրորդ օրվա սկզբում ՀՖՄ փորձագիտական թիմի ղեկավար Վահրամ Շահբազյանը նշեց, որ համայնքային բյուջեից զատ, ՏԻՄ-երը կարող են ունենալ արտաբյուջետային միջոցներ, եւ նրանք հնարավորություն ունեն համագործակցելու ինչպես պետության, այնպես էլ տարբեր դոնոր կազմակերպությունների հետ, իսկ այդ համագործակցության հիմքում ընկած են դրամաշնորհային ծրագրերը, որոնք կազմելու եւ ներկայացնելու համար անհրաժեշտ են որոշակի գիտելիքներ: Այս համատեքստում բանախոսը կարեւորեց նախորդ օրվա ընթացքում ներկայացված թեմաները:

Այնուհետեւ ՀՖՄ գնումների եւ դրամաշնորհների կառավարիչ Հայկանուշ Իսկանդարյանը խոսեց ծրագրերի իրականացման ընթացքում ֆինանսական մոնիտորինգի մասին:

Երկօրյա դասընթացներն ավարտվեցին մասնակիցների միջեւ կազմակերպված մտագրոհով, որի ընթացքում բարձրաձայնվեց մոտ հիսուն ծրագրային գաղափար: Դրանցից մասնակիցներն ընտրեցին իրենց կարծիքով երեք ամենակարեւորները եւ խմբային աշխատանքների արդյունքում այդ գաղափարները դարձրեցին իրագործելի ծրագրեր:

Ամփոփելով երկօրյա դասընթացները՝ մասնակիցները կարեւորեցին ներկայացված թեմաները, առանձնացնելով խմբային աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս կիրառել եւ ավելի ամրապնդել ստացած գիտելիքները:

Իսկ առջեւում ՏԺԴ-ի տարածքային դասընթացների եւ դրամաշնորհային ծրագրերի մշակման եւ իրականացման փուլերն են, որոնք կմեկնարկեն ընթացիկ տարվա հուլիս ամսին՝ ըստ ՀՀ մարզերի:

**ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ**

# ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՆԵՐՔԵՎԻՑ ՎԵՐԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Վերեւից ներքեւ փոփոխությունները տեւական չեն***

← էջ 1

Հանդիպման ընթացքում երիտասարդները պատմեցին իրենց գործունեության մասին:

«Եվրասիա համագործակցություն հիմնադրամի» (ԵՀՀ) ծրագրերի ղեկավար Լիլիթ Ազոյանը պատմեց, որ իրենց կազմակերպությունը գործում է արդեն 20 տարի եւ ի սկզբանե դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունից ԵՀՀ-ն դարձել է մի կազմակերպություն, որն զբաղվում է հասարակության առջեւ ծառացած տարբեր հարցերով:

Լ. Ազոյանը խոսեց ԵՀՀ կողմից իրականացվող ծրագրերի մասին, մասնավորապես նշելով «Մարդամեջ»-ը, «Երիտասարդ առաջնորդների բանկ»-ը, ԻնՖոՏները եւ այլն:

ԵՀՀ ներկայացուցիչը անդրադարձավ նաեւ սեփական փորձին, որն այժմ փոխանցում է այլ երիտասարդների:

«20 տարվա ընթացքում մենք փորձել ենք վերափոխիչ գործունեություն իրականացնել եւ հուսով եմ, որ դա մեզ հաջողվել է», - ամփոփեց բանախոսը:

ԱՄՆ նահանգապետի հետ հանդիմանը մասնակցում էին «Տեղական ժողովրդավարության դպրոց»-ի (ՏԺԴ) մեծ թվով ներկայացուցիչներ: Դպրոցի, երիտասարդների ունեցած ակնկալիքների մասին ներկաներին պատմեց Ալեքսան Ներսիսյանը: Վերջինս տեղեկացրեց, որ ՏԺԴ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏեղ) ծրագրի բաղադրիչն է, եւ դրա հիմնական նպատակն է ՀՀ համայնքներում պատրաստել ակտիվ ու ժողովրդավար երիտասարդ մասնագետներ, ովքեր կմասնակցեն հանրային կառավարման, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման գործընթացներին:

Ա. Ներսիսյանը ներկայացրեց նաեւ, թե ինչու են իր նման բազմաթիվ երիտասարդներ դիմել այս դպրոց եւ ինչ ակնկալիքներ ունեն:

Բանախոսը պատմեց, որ Հայաստանի անկախության հռչակումից ի վեր ՀՀ երիտասարդությունը բավարար մասնակցություն չի ունեցել հանրային կառավարման գործընթացներին, հատկապես՝ փոքր եւ միջին համայնքներում, որոնք զերծ են մնացել զարգացած երկրների փորձից: Արդյունքում, երիտասարդության մոտ առաջացել է անվստահություն սեփական պետության նկատմամբ, անտարբերություն համայնքում տիրող իրավիճակի հանվարդ Դինին, այլ նաեւ նման խոստումնալից երիտասարդներին ներկայացնել նահանգապետին, որը Հայաստանում է Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) հրավերով:

ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան գրասենյակի տնօրենը տեղեկացրեց նահանգապետ Դինի հարստագույն փորձը. 6 ժամկետ պաշտոնավարել է որպես Վերմոնտ նահանգի նահանգապետ, եղել է ԱՄՆ նախագահի թեկնածու, մի քանի տարի ղեկավարել է ԱՄՆ Դեմոկրատական կուսակցությունը: «Նահանգապետ Դինը ձգտում է ընդլայնել ժողովրդավարական քաղաքականությունն ամբողջ աշխարհում, եւ սա լավ առիթ է սովորելու եւ գաղափարներ փոխանակելու նրա հետ»,- նշեց Դեբորա Գրիսերը: Վերջինս հավելեց, որ ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական հեղափոխությունից հետո ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ նոր ծրագիր է մեկնարկել, որի նպատակն է խթանել ներառականությունը քաղաքական եւ ընտրական գործընթացներում՝ շեշտադրելով քաղաքացիների առավել ակտիվ մասնակցությունը:

դեպ: Ըստ ՏԺԴ-ի ներկայացուցչի, «այս ամենն ակնհայտորեն դրսեւորվեց նաեւ վերջերս ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ժամանակ, որոնց փոքր ու միջին համայնքները թույլ մասնակցություն ունեցան: Այսօր Հայաստանում տեղի ունեցող ժողովրդավարական բարեփոխումները, այս դպրոցը հնարավորություն են տալիս երիտասարդներին մասնակից դառնալ այդ գործընթացներին: ՏԺԴ-ում ակնկալում ենք ստանալ հանրային կառավարման, տեղական ինքնակառավարման համակարգի մասին գիտելիքներ, որոնք հետագայում կիրառելու ենք մեր համայնքներում»:

Հանդիպմանը ներկա էին նաեւ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» ՀԿ-ի իրականացրած «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի կողմից ստեղծված քաղաքացիական երիտասարդական կենտրոնների (ՔԵԿ) ներկայացուցիչները, որոնք նույնպես պատմեցին իրենց կատարած աշխատանքների մասին:

Իսկ բազմափորձ նահանգապետի գործունեությունն ամփոփ ներկայացրեց ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան գրասենյակի տնօրեն Դեբորա Գրիսերը: Վերջինս նշեց, որ իր համար մեծ պատիվ է ոչ միայն ԱՄՆ ՄԶԳ հայաստանյան առաքելության անունից ողջունելու Հ.

Ողջունելով ներկաներին՝ նահանգապետը համեմատություն կատարեց ԱՄՆ եւ հայստանյան քաղաքականության միջեւ. «Նմանություններից մեկն այն է, որ հաճախ մարդիկ կենտրոնանում են քաղաքների վրա եւ ուշադրություն չեն դարձնում շրջաններին, մարզերին: Այդ խնդիրը կա բոլոր երկրներում: Քաղաքները դառնում են մագնիս երիտասարդների համար, իսկ մարզերը կորցնում են իրենց երիտասարդ բնակչությունը:

Քաղաքականությամբ զբաղվող բոլոր մարդիկ որոշում են սկսել որպես պատգամավորներ, բայց փոփոխությունը վերեւից ներքեւ չի իջնում, եւ այն տեւական չի լինում: Տեւականը՝ ներքեւից վերեւ կատարվող փոփոխությունն է, եւ եթե ուզում եք քաղաքականությամբ զբաղվել, ապա պետք է սկսել մարզերից, տեղական ինքնակառավարման մարմիններից»:

Հ. Դինը կարեւորեց իրեն ներկայացված տեղեկությունները՝ նշելով, որ դրանցում արդեն ակնհայտ է, որ փոփոխություն անելը սկսել են ներքեւից. «Դուք ուժեղացնում եք հասարակությունը՝ ուժեղացնելով անհատներին հասարակության մեջ»:

Նահանգապետ Դինը պատմեց նաեւ, թե ինչ մեծ դերակատարում են ունեցել երիտասարդներն իր նախընտրական քարոզչության ժամանակ, երբ չկային այսքան սոցցանցեր, եւ ինչպես են աջակցել նախագահ Բարաք Օբամային: «Երիտասարդները վերափոխեցին ամերիկյան պատմությունը»,- նշեց բազմափորձ քաղաքական գործիչը եւ հորդորեց երիտասարդներին. «Եթե ուզում ես փոփոխությունը քո ուզածով լինի, պետք է մտնես քաղաքականության մեջ եւ փոխես քաղաքականության անիվը»:

Հանդիպման ավարտին երիտասարդները նահանգապետին դիմեցին բազմաթիվ հարցերով, որոնց վերջինս սիրով տվեց սպառիչ պատասխաններ: Իսկ թե ո՞րն է Հովարդ Դինի հաջողության գաղտնիքը՝ Նահանգապետն ասաց. «Իմ հաջողության բանալին եռանդուն աշխատանքն է, մարդկանց լսելը եւ, ամենակարեւորը՝ հաջողությունը, նաեւ՝ բախտը»:

***ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ***

# ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ

← էջ 1

Դասախոսներն անդրադարձան նաեւ համայնքների ֆինանսական համահարթեցմանը, համայնքի զարգացման ծրագրերի կազմման գործընթացի առանձնահատկություններին, համայնքի տնտեսական զարգացմանը, տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցությանը, վերջինիս իրավական հիմքերին ու եղանակներին: Մասնակիցները նաեւ ծանոթացան դրամաշնորհային ծրագրի մշակման առանձնահատկություններին եւ ձեռքբերեցին ծրագրեր կազմելու եւ դրանք արդյունավետորեն կյանքի կոչելու հմտություններ:

Դասընթացները չէին սահմանափակվում միայն դասախոսություններով. մասնակիցները կատարում էին նաեւ տարբեր գործնական աշխատանքներ, մասնավորապես, ընդհանուր եւ խմբային քննարկումների, վարժությունների, խաղերի եւ թիմային աշխատանքների միջոցով նրանք հնարավորություն ստացան ամրապնդելու եւ գործնականում կիրառելու ստացած տեսական գիտելիքները:

Դասընթացների վերջին օրն ամենաթեժն էր ու մրցակցայինը, երբ ձեւավորված հինգ խմբերը ներկայացնում էին իրենց դրամաշնորհային ծրագրերը, որոնք նպատակաուղղված են համայնքում առկա խնդիրների լուծմանը. ընդ որում, հիմնախնդիրները վերհանել էին հենց մասնակիցները՝ նախապես համայնքներում կարիքների գնահատում եւ քարտեզագրում իրականացնելով: Բնական էր նաեւ մրցակցային տրամադրվածությունը, քանզի յուրաքանչյուր խումբ ձգտում էր, որ իր մշակած ծրագիրը խստագույն հանձնաժողովի կողմից ճանաչվի լավագույնը:

Ծրագրերի գնահատման ժամանակ առանձին-առանձին դիտարկվեցին ծրագրային բոլոր հայտերը եւ դրանց բյուջեները, մասնավորապես՝ յուրաքանչյուր ծրագրի իրագործելիությունն ու բյուջեի ծախսերի բաշխումը: Ծրագրերը գնահատվեցին 1-5 բալանոց սանդղակով:

Վերջնականացված ծրագրերը պետք է կյանքի կոչվեն մինչեւ ս.թ. դեկտեմբեր ամսվա ավարտը: Յուրաքանչյուր ծրագրի բյուջեի համար առավելագույն շեմ է սահմանվել 500.000 ՀՀ դրամը: Գնահատման արդյունքում ներկայացված ծրագրերը գրավեցին հետեւյալ հորիզոնականները.

Վայոց ձորում իրականացվելիք ծրագրերը

| *Համայնք* | *Ծրագրի անվանում* | *Նպատակ* | *Հորիզոնական* |
|---|---|---|---|
| Գլաձոր | «Համայնքը մենք ենք» | Նպաստել Գլաձոր համայնքի երիտասարդների կյանքի աշխուժացմանը՝ ներգրավելով նրանց տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներում | 1 |
| Ջերմուկ | «Ջերմուկրատիա» | Ապահովել ՏԻՄ-եր-համայնքի բնակիչներ երկկողմանի արդյունավետ հաղորդակցություն՝ տեղեկատվական տախտակներին առաջարկությունների արկղերի տեղադրման և օգտագործման միջոցով | 2 |
| Վայք, Եղեգնաձոր, Մալիշկա | «Ապագա երիտասարդ առաջնորդներ» | Վայք, Եղեգնաձոր և Մալիշկա համայնքների 11-րդ և 12-րդ դասարանների աշակերտներին դարձնել իրավագիտակից և ներգրավել համայնքի կառավարման ու զարգացման գործընթացներում | 3 |
| Արենի | «Արենի ամառային ճամբար» | Համայնքի երիտասարդների շրջանում բարձրացնել ՏԻ և ՏԺ վերաբերյալ իրազեկվածության մակարդակը | 4 |
| Եղեգիս | «Եթե ես լինեի համայնքի ղեկավար» | Բարձրացնել Եղեգիս համայնքի խնդիրների բացահայտման և լուծման գործընթացներում երիտասարդների մասնակցության աստիճանը | 5 |

էջ 5 →

## ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

***Լուսինե Վիրաբյան, Ջերմուկ համայնք***

ՏԺԴ դասընթացների առաջին եռօրյայի ընթացքում դասախոսությունների տեղատարափ էր ու թվում էր, որ ոչինչ չենք ընկալելու ու հիշելու, բայց երկրորդ եռօրյայի ընթացքում, երբ գործնական աշխատանքներ էինք կատարում, օգտագործում էինք բոլոր այն տեսական գիտելիքները, որոնք ստացել էինք առաջին օրերին:

Իհարկե, դժվար էր պատկերացնել, որ մի քանի օրերի ընթացքում կարելի էր ներկայացնել տեղական ինքնակառավարման համակարգն այնպես, որ ոլորտից անտեղյակ երիտասարդը կարողանա կամ ցանկանա հետագայում մասնակցություն ունենալ համայնքային կյանքին, բայց համոզվեցինք հակառակում:

Ասվածի ապացույցը կազմավորված խմբերի կողմից ներկայացված ծրագրերն էին, որոնք բոլորն էլ հետաքրքիր էին ու մրցունակ:

Ես կարծում եմ, որ այս ծրագրի արդյունավետությունը նաեւ դրա շարունակականության մեջ է:

## ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՆԱԿՉԻ ՁԱՅՆԸ ՎՃՌՈՐՈՇ Է ՈՒ ԿԱՐԵՎՈՐ

***Ալֆիկ Կիրակոսյան, Գլաձոր համայնք***

ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող այս ծրագիրը նպատակային է ու արդյունավետ, եւ ճիշտ է ընտրված նաեւ թիրախային խումբը, քանզի երիտասարդներն ավելի եռանդով ու ջանասիրությամբ կարող են մասնակցել համայնքային կյանքին:

ՏԺԴ դասընթացները մեզ տվեցին բազմաբովանդակ գիտելիքներ: Մենք ստացանք շատ մեծ տեղեկատվություն տեղական ինքնակառավարման մասին, ավելի հստակ պատկերացում կազմեցինք, թե ինչի համար եւ ինչու պիտի մասնակցենք համայնքի կառավարման գործընթացին: Իմ կարծիքով, անկախ մասնագիտությունից, սեռից ու տարիքից, բոլորը պետք է հետաքրքրվեն տեղական ինքնակառավարմամբ, եւ համայնքի յուրաքանչյուր բնակիչ պետք է ընդունի ու հասկանա, որ իր ձայնը շատ կարեւոր ու վճռորոշ է: Իմ այս համոզումն այստեղ ավելի ամրապնդվեց, ու փորձելու եմ այստեղ ստացած գիտելիքները օգտագործել ի նպաստ մեր համայնքի:

## ՎՍՏԱՀ ԵՄ՝ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԼԻՆԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ

***Անի Գրիգորյան, Եղեգնաձոր համայնք***

Ողջունում եմ ծրագրի կազմակերպիչներին՝ նմանօրինակ դպրոցի մտահղացման եւ իրականացման համար: Տեղական ինքնակառավարման համակարգի մասին, իհարկե, որոշ գիտելիքներ ունեինք, բայց ծրագրի շրջանակներում դասընթացավարներն ավելի մանրամասն ներկայացրին ոլորտը, բացատրեցին, թե որքան կարեւոր է համայնքային կյանքում մեր ներգրավվածությունը: Սեմինարների ընթացքում սովորեցինք նաեւ, թե ինչպես պետք է կազմել գրագետ ծրագրեր, որպեսզի դրանք նպատակաուղղված լինեն համայնքի այս կամ այն խնդրի լուծմանը:

Չնայած այն հանգամանքին, որ ես հանդիսանում եմ ՏԻ ոլորտի ներկայացուցիչ եւ որոշակի գիտելիքներ արդեն իսկ ունեի բնագավառի վերաբերյալ, այդուհանդերձ, այս դասընթացներն ինձ շատ բան տվեցին.կարծում եմ, պետք է կարողանալ ամեն մի դասընթացից քաղել, վերցնել քեզ անհրաժեշտը, նորը: Խիստ կարեւորում եմ նաեւ այն հանգամանքը, որ դասընթացի շնորհիվ մարզի երիտասարդների միջեւ հաստատվեց ծանոթություն, ու վստահ եմ, որ համագործակցությունը կլինի շարունակական:

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԵՆ

***Տաթեւ Առաքելյան, Մեղրի համայնք***

Երբ գալիս էի այս դպրոց, անկեղծ ասած, շատ ակնկալիքներ չունեի, բայց հետո հասկացա ծրագրի լրջությունը, եւ որ շատ կարեւոր է, համոզվեցի, որ այստեղ եկող յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր համայնքի տեսլականը: Ինձ ոգեւորեց նաեւ այն հանգամանքը, որ ծրագիրը չի ավարտվելու միայն դասընթացներով, այլ ունենալու է շարունակականություն. մեզ տրամադրվելու են դրամաշնորհներ, որոնց միջոցով կկարողանանք վերհանել, լուծում տալ համայնքային խնդիրներին:

Ծրագրի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ հիմնական շեշտը դրված է կոնկրետ համայնքների վրա, ինչն այժմ շատ կարեւոր է.եթե ուզում ենք պետություն զարգացնել, պիտի սկսել ստորին մակարդակից՝ համայնքներից, այլապես ցանկալի արդյունքի չենք հասնի. պետության հիմքում համայնքներն են՝ իրենց մեծ ու փոքր խնդիրներով: Շատ կարեւոր է, որ երիտասարդներն ակտիվորեն մասնակցեն համայնքային կյանքին եւ փորձեն իրենց հնարավորությունների սահմաններում նպաստել համայնքի զարգացմանը: Իսկ նմանօրինակ ծրագրերը հնարավորություն են ընձեռում երիտասարդներին՝ ավելի մոտիկից ծանոթանալու տեղական ինքնակառավարմանը, ձեռքբերելու անհրաժեշտ գիտելիքներ, որոնք հետագայում կօգտագործվեն ի նպաստ համայնքների:

# ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ

← էջ 4

## Հաջորդ կանգառը՝ Գորիս համայնք

Տեղական ժողովրդավարության դպրոցի հերթական կանգառը Գորիսն էր, որտեղ հավաքվել էին Սյունիքի մարզի մի քանի տասնյակ երիտասարդներ, որոնք ընտրվել էին խստապահանջ հանձնաժողովի կողմից: Դասընթացներն անցկացվում էին նույն ծրագրով ու ընթացակարգով, ինչ Վայքում: Տարբեր մասնագիտությունների տեր երիտասարդները փորձում էին յուրացնել դասախոսների կողմից ներկայացվող թեմաները, որոնք վերաբերում էին տեղական ինքնակառավարման համակարգի այս կամ այն դրույթին:

Այստեղ նույնպես մեծ հետաքրքրություն ու ոգեւորություն ցուցաբերվեցին գործնական աշխատանքների ժամանակ: «Բյուջետապոլիս» խաղը հնարավորություն ընձեռեց հարստացնել մասնակիցների գիտելիքները համայնքի բյուջեի բաղկացուցիչ վարչական եւ ֆոնդային մասերի ճանաչման եւ տարբերակման վերաբերյալ, մասնակիցներին փոխանցել պլանավորման եւ սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման հմտություններ՝ կախված կոնկրետ իրավիճակից:

Գորիսում ընթացող դասընթացներն աչքի ընկան նաեւ հյուրերի քանակով. երիտասարդները հյուրընկալեցին ԱՄՆ-ի Սթեմֆորդ քաղաքի քաղաքապետի տեղակալ Սթիվըն Քոլենբերգին, որը խոսեց ԱՄՆ-ում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների, տեղական ինքնակառավարման կարեւորության եւ դաշնային-տեղական կառավարման տարբերությունների մասին: Դասընթացների մասնակիցները հնարավորություն ունեցան իրենց հարցերն ուղղել նաեւ Տեղ համայնքի ղեկավար Ներսես Շադունցին, Սիսիան համայնքի աշխատակազմի քարտուղար Վաչագան Միրաբյանին եւ Գորիսի մամուլի ակումբի ղեկավար Սուսաննա Շահնազարյանին:

Ինչպես Վայքում, այնպես էլ Գորիսում մասնակիցներն ավելի մարտական էին տրամադրված մտագրոհի ընթացքում, երբ ներկայացվեց 53 ծրագրային գաղափար, որոնցից միայն մի քանիսը պետք է դառնային դրամաշնորհի հավակնող ծրագիր: Ընտրվեց 5 ծրագիր, որոնք էլ հանձնաժողովի անդամների քվեարկությամբ զբաղեցրեցին հետեւյալ հորիզոնականները (իդեպ, առաջին հորիզոնականը զբաղեցրեց երկու թիմ):

Ի դեպ, Գորիսում անցկացվող դասընթացների երկրորդ եռօրյային ներկա էր նաեւ ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի համակարգող Արթուր Դրամփյանը, որը բարձր գնահատեց կատարված աշխատանքը, մասնակիցների ոգեւորությունը: «Ես շատ ուրախ եմ ու տպավորված, քանզի բոլոր մասնակիցների աչքերում տեսա կայծ, ցանկություն՝ իրենց համայնքներում ինչ-որ բան անելու, փոխելու համար, որն ամենակարեւորն է: Շատ կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ երիտասարդները լավ գաղափարներ ունեն, իսկ ֆինանսական միջոցներ միշտ էլ կգտնվեն:

Գաղափարները ձախողվելու շանսերը քիչ են, քանզի երիտասարդների թիկունքին կանգնած են լուրջ թիմեր»,- նշեց Ա.Դրամփյանը:

Դասընթացների բոլոր մասնակիցները ստացան ավարտական հավաստագրեր:

ՏԺԴ-ի հերթական կանգառները նախատեսվում են սեպտեմբեր ամսին Շիրակի եւ Արմավիրի մարզերում, որոնց նույնպես կանդրադառնանք թերթի հաջորդ համարներում:

***ՀԱՍՄԻԿ ՔԵՐՈԲՅԱՆ***

Սյունիքում իրականացվելիք ծրագրերը

| *Համայնք* | *Ծրագրի անվանում* | *Նպատակ* | *Հորիզոնական* |
|---|---|---|---|
| Մեղրի | «Համայնքը քո ձեռքում» | Մեղրի և Ագարակ բնակավայրերի աշակերտների՝ համայնքային կյանքի նկատմամբ հետաքրքրվածության և իրազեկվածության մակարդակի բարձրացում | 1 |
| Տաթև Տեղ | «Հանուն համայնքի» | Նպաստել Տեղ և Տաթև համայնքների ակտիվ և նախաձեռնող երիտասարդական խմբերի ստեղծմանը և ներգրավմանը համայնքի կառավարման գործընթացում | 1 |
| Գորիս | «Մասնակցային բյուջե» | Խթանել Գորիս համայնքի երիտասարդների մասնակցությունը համայնքի 2020թ. բյուջեի կազմման աշխատանքներում | 2 |
| Կապան | «Նախշուտ Ղափան» | Նպաստել Կապան համայնքում առկա աղբահանության խնդրի լուծմանն ու բարելավել ծառայության վիճակը | 3 |
| Գորայք Սիսիան | «Խաբարբզիկ» | Նպաստել կանանց զարգացմանը՝ զինելով տեղական ինքնակառավարման և անձնային աճի վերաբերյալ նոր գիտելիքներով, հմտություններով և փորձով | 4 |

## ԴՊՐՈՑՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԼԻՆԵԼՈՒ ԵՆ ՈՒՂԵՆԻՇ

### *Յուրա Ավագյան, Մեղրի համայնք*

Ծրագրին մասնակցել եմ մեծ ուրախությամբ, ոգեւորությամբ ու ակնկալիքներով, որոնք, իհարկե, արդարացվեցին, ավելին, այստեղ ձեռքբերեցի ընկերներ, որոնց հետ հետագայում անպայման կհամագործակցենք: Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր բնակիչ, առավել եւս՝ երիտասարդները, պետք է ակտիվորեն մասնակցեն համայնքի կառավարման գործընթացին, համայնքային կյանքին: Վստահ եմ, որ այստեղ ստացած գիտելիքները հետագայում լինելու են ուղենիշ իմ եւ մասնակից մյուս երիտասարդների համար, որոնք կփորձեն իրենց համայնքներում ինչ-որ քայլ անել, մի բան փոխել:

Կարեւոր գործոններից մեկն էլ այն է, որ մեզ հնարավորություն ընձեռվեց կազմել ծրագիր, որը հետագայում իրականացնելու ենք մեր համայնքում: Ծրագրի իրագործման ընթացքում մենք կփորձենք ոչ միայն որոշակի խնդիրներ վերհանել եւ լուծում տալ, այլ նաեւ գործնականում կիրառել դասընթացի ժամանակ ձեռքբերած գիտելիքները: Կարծում եմ, դասընթացի կազմակերպիչներին ուղղված լավագույն շնորհակալական խոսքը կլինի գործը՝ համայնքում արդյունավետորեն իրականացված ծրագիրը:

## ՃԻՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ԾՐԱԳԻՐ

### *Անժելա Գրիգորյան, Տեղ համայնք*

Ես շատ բարձր եմ գնահատում այս ծրագիրը, որն իրականացվում է ոլորտին քաջատեղյակ երեք կազմակերպությունների կողմից: Այսօր համայնքներում շատ կարեւոր է երիտասարդների ակտիվ մասնակցությունը, ներգրավվածությունը համայնքային կյանքին. Իսկ դրա համար անհրաժեշտ են որոշակի գիտելիքներ ու հմտություններ, որոնք կարող ենք ձեռքբերել այս դպրոցի օգնությամբ:

Շատ ճիշտ էր մշակված նաեւ դասընթացների ռազմավարությունը, երբ մանրամասնորեն ներկայացվում է, թե ինչպես պետք է աշխատել, որտեղից պիտի սկսել, որն է առաջնայինը...

Կարեւոր է նաեւ, որ դպրոցն ունենալու է շարունակականություն, ու վստահ եմ, որ ծրագրերն իրականացնելուց հետո շատ ու շատ երիտասարդներ են ցանկանալու մասնակցել ՏԺԴ դասընթացներին: Կարծում եմ, որ այս ծրագրի մասնակիցները կարող են իրենց փորձը փոխանցել նաեւ այլ երիտասարդների, արդյունքում կունենանք ավելի մեծ թվով պատրաստված ու ժողովրդավար երիտասարդներ:

Եթե փորձենք ամփոփ ձեւակերպել, ապա դպրոցի կարիքն իսկապես կար, այն ճիշտ ժամանակին իրագործված ծրագիր է:

## ԴՊՐՈՑՆ ԻՆՁ ՏՎԵՑ ՆԱԵՎ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### *Մարիա Հովհաննիսյան, Կապան համայնք*

Սպասելիքներս շատ մեծ էին, եւ դրանք իրականացան:

Այսօր մեր համայնքում կա մասնակցայնության խնդիր, հատկապես կանայք ավելի քիչ են մասնակցում հանրային լսումներին, ավագանու նիստերին. հիմնականում դա բացատրվում է վերջիններիս անտեղյակությամբ, որոշակի կարծրատիպերի առկայությամբ:

Կարծում եմ, որ դպրոցը պետք է ունենա շարունակականություն, ու ցանկալի է, որ մասնակիցները լինեն ոչ միայն երիտասարդներ, այլ նաեւ մեծահասակներ, դպրոցականներ: Կարելի է նմանատիպ դասընթացները ներառել դպրոցական ուսումնական ծրագրում, քանի որ, ըստ իս, դպրոցի շրջանավարտը պետք է որոշակի գիտելիքներ ունենա տեղական ինքնակառավարման ոլորտի վերաբերյալ. սա հնարավորություն կընձեռի հետագայում իմանալ, թե յուրաքանչյուրն ինչ չափով է ի վիճակի մասնակցություն ունենալ համայնքային կյանքին, որքանով է պատրաստ իր վրա կրել համայնքի կառավարման բեռը:

Ես ակտիվ մասնակցում եմ համայնքային կյանքին, ներգրավված եմ տարբեր ծրագրերում եւ ինքս էլ իրականացնում որոշակի ծրագրեր: Մասնակցում եմ համայնքում կազմակերպվող հանրային լսումներին, հայտնում կարծիքս այս կամ այն խնդրի վերաբերյալ, որը հաճախ լսելի է լինում եւ արժանանում հավանության: Այս դասընթացների շնորհիվ ես դարձա ավելի վճռական ու այժմ պատրաստ եմ հաստատուն քայլերով առաջ ընթանալ:

# ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

***«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագրում ընդգրկված***

ՀաՄաՏեղ ծրագրի բոլոր 51 թիրախ համայնքներում ներդրված եւ շահագործվում է Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ): ՀԿՏՀ-ն միասնական տեղեկատվական համակարգ է՝ բաղկացած տարբեր կառավարման ենթահամակարգերից, տվյալների ռեգիստրներից եւ տեղեկատվական ռեսուրսներից: Համակարգի հիմքում ընկած է տեղեկատվության ստացման, մշակման, փոխանակման միասնականության եւ միասնական տեղեկատվական տարածության ապահովման գաղափարը: ՀԿՏՀ բաղադրիչների միջոցով ՏԻՄ-երի աշխատակիցները կարող են համակարգչային եղանակով կատարել իրենց գործառույթները, իրականացնել ներքին եւ արտաքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, կառավարել համայնքի բյուջեն եւ գույքը, պատրաստել եւ տրամադրել տարատեսակ թույլտվություններ եւ այլն: ՀԿՏՀ-ն ծառայում է նաեւ որպես տվյալ համայնքների պաշտոնական համացանցային կայք (օրինակ, www.ashtarak.am, www.meghri.am, www.aparan.am, www.vayk.am, www.goriscity.am, www.vedicity.am, www.sisian.am, www.eghegnadzor.am, www.dilijancity.am, www.kapan.am, www.parakar.am):Կայքերի միջոցով այցելուները կարող են հետեւել ՏԻՄ-երի գործունեությանը, տեղեկանալ համայնքում իրականացվող ծրագրերի եւ դրանց արդյունքների մասին, ստանալ առցանց ծառայություններ, ինչպես նաեւ հաղորդակցվել ՏԻՄ-երի եւ համայնքապետարանների աշխատակազմերի հետ:

ՀՀ օրենսդրությամբ (Տեղական ինքանակառավարման մասին ՀՀ օրենք, հոդված 11, կետ 5) սահմանված է, որ 3000 եւ ավելի բնակիչ ունեցող համայնքը պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը: Տվյալ կայքը պետք է պարունակի հանրությանը հետաքրքրող եւ ՏԻՄ-երի գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող հավաստի եւ արդիական տվյալներ (օրինակ՝ ՏԻՄ-երի նորմատիվ իրավական ակտերը, համայնքի բյուջեի կատարողականը, զարգացման ծրագրերը եւ այլն):

Առաջին համպարփակ արդյունքները ներկայացվել են 2018թ. հունիսի 30-ի դրությամբ իրականացված մշտադիտարկման հիման վրա: Համաձայն ստացված արդյունքների, որոշ համայնքների պարագայում կային խնդիրներ կապված թե՛ կայքերի մշտական հասանելիության, թե՛ դրանցում համապատասխան բնույթի եւ որակի բովանդակության առկայության հետ: Մշտադիտարկման արդյունքները ներկայացվել են համայնքապետարաններին, ինչպես նաեւ ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությանը:

Անցած մեկ տարվա ընթացքում կատարված աշխատանքների շնորհիվ հաջողվել է էականորեն բարելավել ՀԿՏՀ-համայնքային կայքերի բաղադրիչների շահագործման արդյունավետությունը (քանակական եւ որակական առումներով):

«Տեղակատվական համակարգերի զարգացման եւ վերապատրաստման կենտրոն» (ՏՀԶՎԿ) ՀԿ-ի մասնագետների, ինչպես նաեւ ԻնֆոՏների աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվում են ՀաՄաՏեղ ծրագրի թիրախ համայնքների կողմից ՀԿՏՀ բաղադրիչի շահագործման, կայքերի հասանելիության եւ բովանդակության ուսումնասիրման եւ գնահատման աշխատանքներ:

Համայնքների պաշտոնական կայքերի բովանդակության ուսումնասիրման ժամանակ ՏՀԶՎԿ-ի մասնագետների կողմից կիրառվել է «Վեբ բովանդակության վերլուծություն» (Web Content Analysis) մեթոդը: Տվյալ մեթոդը ենթադրում է փորձագետների կողմից առցանց եղանակով կայքերի բովանդակության ուսումնասիրումը՝ նրանցում համապատասխան քանակական եւ որակական բնութագրերի առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար: Այս մեթոդի արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ այն առավելագույնս նման է տեղեկատվության որոնման եւ ստացման այն եղանակներին, որոնց դիմում են պաշտոնական կայքերի սովորական այցելուները:

***Դիտարկվել եւ գնահատվել են ՀԿՏՀ հիման վրա գործող պաշտոնական կայքերի հետեւյալ բաղադրիչները.***

| ԲԱՂԱԴՐԻՉԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԲԱԼԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ) |
|---|---|
| 1. Նորություններ | 1-10 |
| 2. Հայտարարություններ | 1-5 |
| 3. Զարգացման ծրագրեր | 1-5 |
| 4. Ավագանու նիստեր | 1-20 |
| 5. Համայնքի ղեկավարի որոշումներ | 1-10 |
| 6. Խորհրդակցություններ | 1-5 |
| 7. Ընդունելություններ | 1-5 |
| 8. Մտիցներ | 1-20 |
| 9. Ելիցներ | 1-20 |
| 10. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն | 1-20 |
| 11. Տեղեկանքների տրամադրում | 1-10 |
| 12. Բյուջե - Մուտքերի պլան | 1-20 |
| 13. Բյուջե - Ծախսերի պլան | |
| 14. Բյուջե - Մուտքերի կատարողական | |
| 15. Բյուջե - Ծախսերի կատարողական | |
| 16. Համայնքային գույքի կառավարում | 1-20 |
| 17. Թույլտվությունների տրամադրում | 1-20 |

Գնահատման բալային համակարգը տարբերակված է ՀԿՏՀ տարբեր բաղադրիչների համար, ինչը բխում է բաղադրիչների բովանդակային եւ գործառնական կարեւորությունից (կշռից): Առավել կարեւոր եւ բարդ բաղադրիչները գնահատվել են 20 բալանոց, իսկ առավել պարզ բաղադրիչները՝ 5 բալանոց համակարգերով:

Վերջին մշտադիտարկումն իրականացվել է 2019թ. հունիսի 30-ի դրությամբ:

Մշտադիտարկված բոլոր 51 թիրախ համայնքների կայքերը առկա են եւ հասանելի համացանցում:

Գնահատման արդյունքում համայնքների պաշտոնական կայքերը ստացել են հանրագումարային բալային միավորներ: Առավել բարձր միավորներ են ստացել Սիսիան (169մ.), Ջրվեժ (167մ.), Ջերմուկ (167մ.), Դիլիջան (165մ.) եւ Բյուրեղավան (164մ.) համայնքների կայքերը: Այս համայնքների պաշտոնական կայքերում արդյունավետորեն շահագործվում են գրեթե բոլոր բաղադրիչները, իսկ առկա բովանդակության որակը բավականին բարձր է: Առավել ցածր են գնահատվել Սարդարապատ (56մ.), Ոսկետափ (50մ.), Մրգաշատ (32մ.) եւ Վարդենիկ (16մ.) համայնքների պաշտոնական կայքերը: Առավել արդյունավետ են շահագործվում խոշորացված համայնքների պաշտոնական կայքերը:

Հատկանշական է, որ նախկին որոշ գյուղական եւ փոքր համայնքների կայքեր տեղ են զբաղեցրել առաջատարների շարքում՝ Ջրվեժ (167), Աշոցք (148), Ամասիա (147):

***Գնահատված կայքերի տվյալները ներկայացված են ստորեւ:***

| N | Համայնք | Կայքի գնահատման միավոր (Բալ) | Խոշորացված |
|---|---|---|---|
| 1 | Սիսիան | 169 | + |
| 2 | Ջրվեժ | 167 | + |
| 3 | Ջերմուկ | 167 | + |
| 4 | Դիլիջան | 165 | + |
| 5 | Բյուրեղավան | 164 | + |
| 6 | Եղվարդ | 162 | + |
| 7 | Վեդի | 159 | |
| 8 | Մեղրի | 159 | + |
| 9 | Աշտարակ | 155 | |
| 10 | Նոյեմբերյան | 151 | + |
| 11 | Վայք | 149 | + |
| 12 | Աշոցք | 148 | + |
| 13 | Կողբ | 148 | + |
| 14 | Ամասիա | 147 | + |
| 15 | Քաջարան | 145 | + |
| 16 | Սպիտակ | 144 | |
| 17 | Եղեգնաձոր | 144 | |
| 18 | Բերդ | 143 | + |
| 19 | Թումանյան | 142 | + |
| 20 | Ալավերդի | 139 | + |
| 21 | Այրում | 139 | + |
| 22 | Գորիս | 137 | + |
| 23 | Քասախ | 136 | |
| 24 | Սարապատ | 135 | |
| 25 | Իջևան | 128 | |
| 26 | Գորայք | 127 | + |
| 27 | Ախուրյան | 125 | + |
| 28 | Արփի | 116 | + |
| 29 | Սարուխան | 115 | |
| 30 | Արթիկ | 113 | |
| 31 | Ախթալա | 112 | + |
| 32 | Տեղ | 112 | + |
| 33 | Փարաքար | 110 | |
| 34 | Նորատուս | 106 | |
| 35 | Զառիթափ | 102 | + |
| 36 | Մասիս | 91 | |
| 37 | Մարալիկ (Անի) | 89 | + |
| 38 | ՏաթևՇինուհայր | 89 | + |
| 39 | Օշական | 87 | |
| 40 | Ազատան | 80 | |
| 41 | Օձուն | 79 | + |
| 42 | Ուրցաձոր | 78 | + |
| 43 | Մեծամոր | 77 | |
| 44 | Գավառ | 75 | |
| 45 | Կարմիրգյուղ | 71 | |
| 46 | Մարտունի | 67 | |
| 47 | Մխչյան | 58 | |
| 48 | Սարդարապատ | 56 | |
| 49 | Ոսկետափ | 50 | |
| 50 | Մրգաշատ | 32 | |
| 51 | Վարդենիկ | 16 | |

# ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

***թիրախ համայնքների կողմից ՀԿՏՀ կայքերի բաղադրիչների շահագործումը***

| N | Համայնք | Կայք (Դոմենկամ IP) | Միավոր (2018 հուն.) | Միավոր (2019 հունիս.) | Աճ (2019 հուն. - 2018 հուն. նկատմ.) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Սիսիան | sisian.am | 161 | 169 | 8 |
| 2 | Եղվարդ | yeghvard.am | 135 | 162 | 27 |
| 3 | Ջերմուկ | jermuk.am | 151 | 167 | 16 |
| 4 | Ջրվեժ | jrvezh-kotayq.am | 141 | 167 | 26 |
| 5 | Մեղրի | meghri.am | 156 | 159 | 3 |
| 6 | Աշոցք | ashotsq.am | 150 | 148 | -2 |
| 7 | Աշտարակ | ashtarak.am | 151 | 155 | 4 |
| 8 | Բյուրեղավան | byureghavan-kotayk.am | 141 | 164 | 23 |
| 9 | Վեդի | vedicity.am | 136 | 159 | 23 |
| 10 | Դիլիջան | dilijancity.am | 156 | 165 | 9 |
| 11 | Սպիտակ | 87.241.173.9 | 142 | 144 | 2 |
| 12 | Վայք | vayk.am | 142 | 149 | 7 |
| 13 | Ալավերդի | 212.42.196.10 | 152 | 139 | -13 |
| 14 | Եղեգնաձոր | yeghegnadzor.am | 107 | 144 | 37 |
| 15 | Բերդ | berdcity.am | 140 | 143 | 3 |
| 16 | Թումանյան | tumanyancity.am | 134 | 142 | 8 |
| 17 | Ամասիա | amasia.am | 139 | 147 | 8 |
| 18 | Այրում | ayrumcity.am | 120 | 139 | 19 |
| 19 | Գորայք | gorayq.am | 122 | 127 | 5 |
| 20 | Կողբ | koghbhamaynq.am | 123 | 148 | 25 |
| 21 | Նոյեմբերյան | noyemberyan.am | 130 | 151 | 21 |
| 22 | Քասախ | kasakh.am | 96 | 136 | 40 |
| 23 | Գորիս | goriscity.am | 116 | 137 | 21 |
| 24 | Սարապատ | sarapat.am | 121 | 135 | 14 |
| 25 | Քաջարան | kajaran.am | 89 | 145 | 56 |
| 26 | Իջևան | ijevancity.am | 62 | 128 | 66 |
| 27 | Սարուխան | sarukhan.am | 87 | 115 | 28 |
| 28 | Փարաքար | parakar.am | 87 | 110 | 23 |
| 29 | Արթիկ | artik.am | 78 | 113 | 35 |
| 30 | Նորատուս | noratus.am | 98 | 106 | 8 |
| 31 | Արփի | arpishirak.am | 101 | 116 | 15 |
| 32 | Մասիս | masiscity.am | 87 | 91 | 4 |
| 33 | Զառիթափ | zaritap.am | 95 | 102 | 7 |
| 34 | Տեղ | tegh.am | 93 | 112 | 19 |
| 35 | Ախուրյան | akhuryan.am | 76 | 125 | 49 |
| 36 | Ազատան | azatan.am | 68 | 80 | 12 |
| 37 | Ուրցաձոր | urtsadzor.am | 97 | 78 | -19 |
| 38 | Օշական | oshakanhamaynq.am | 61 | 87 | 26 |
| 39 | Ախթալա | akhtala.am | 90 | 112 | 22 |
| 40 | Անի (Մարալիկ) | maralik.am | 69 | 89 | 20 |
| 41 | Մեծամոր | 130.193.122.147 | 65 | 77 | 12 |
| 42 | Մխչյան | 37.252.69.103 | 49 | 58 | 9 |
| 43 | Գավառ | 130.193.121.177 | 72 | 75 | 3 |
| 44 | Մարտունի | martunihamaynq.am | 79 | 67 | -12 |
| 45 | Ոսկետափ | vosketap.am | 50 | 50 | 0 |
| 46 | Օձուն | odzun.am | 22 | 79 | 57 |
| 47 | Կարմիրգյուղ | karmirgyugh.am | 55 | 71 | 16 |
| 48 | Մրգաշատ | 87.241.164.104 | 32 | 32 | 0 |
| 49 | Տաթև (Շինուհայր) | tatevhamaynq.am | 72 | 89 | 17 |
| 50 | Սարդարապատ | sardarapathamaynq.am | 29 | 56 | 27 |
| 51 | Վարդենիկ | vardenik.am | 16 | 16 | 0 |

***Կայքերի շահագործման արդյունավետությունը վերջին մեկ տարվա ընթացքում հիմնականում բարելավվել է: Առավել շատ բարելավում է նկատվել հետեւյալ համայնքների կայքերի աշխատանքում.***

| Դիրքը գնահատման սանդղակում | Համայնք | Կայքը | Միավոր (2018 հունիս) | Միավոր (2019 հունիս) | Բարելավում 2018 հուլիսի նկատմամբ (բալ) |
|---|---|---|---|---|---|
| 26 | Իջևան | ijevancity.am | 62 | 128 | +66 |
| 46 | Օձուն | odzun.am | 22 | 79 | +57 |
| 25 | Քաջարան | kajaran.am | 89 | 145 | +56 |
| 35 | Ախուրյան | akhuryan.am | 76 | 125 | +49 |
| 22 | Քասախ | kasakh.am | 96 | 136 | +40 |

***Որոշ համայնքների պաշտոնական կայքերի շահագործման արդյունավետությունը կամ մնացել է անփոփոխ կամ նվազել է.***

| Դիրքը գնահատման սանդղակում | Համայնք | Կայքը | Միավոր (2018 հունիս) | Միավոր (2019 հունիս) | Բարելավում 2018 հուլիսի նկատմամբ (բալ) |
|---|---|---|---|---|---|
| 45 | Ոսկետափ | vosketap.am | 50 | 50 | 0 |
| 48 | Մրգաշատ | 87.241.164.104 | 32 | 32 | 0 |
| 51 | Վարդենիկ | vardenik.am | 16 | 16 | 0 |
| 6 | Աշոցք | ashotsq.am | 150 | 148 | -2 |
| 44 | Մարտունի | martunihamaynq.am | 79 | 67 | -12 |
| 13 | Ալավերդի | Alaverdi.am | 152 | 139 | -13 |
| 37 | Ուրցաձոր | urtsadzor.am | 97 | 78 | -19 |

!!! Սիսիան համայնքի պաշտոնական կայքը ինչպես 2018-ին, այնպես էլ 2019-ին զբաղեցրել է առաջին հորիզոնականը (1):

!!! Վարդենիկ համայնքի պաշտոնական կայքը ինչպես 2018-ին, այնպես էլ 2019-ին զբաղեցրել է վերջին հորիզոնականը (51):

Առավել արդյունավետ են գործում ***Կոտայքի, Վայոց Ձորի, Տավուշի*** եւ ***Սյունիքի*** մարզերի թիրախ համայնքների պաշտոնական կայքերը, առավել ոչ արդյունավետ՝ ***Արարատի, Գեղարքունիքի*** եւ ***Արմավիրի*** մարզերի համայնքներինը:




Համայնքներում առավել արդյունավետ շահագործվող բաղադիրչներն են՝ Ելիցները, Նորությունները, Ավագանու եւ համայնքի ղեկավարի որոշումները, Զարգացման ծրագրերը: Դիտարկված բոլոր համայնքներում արդյունավետորեն շահագործվում է ՀԿՏՀ Ելից գրությունների բաղադրիչը, ինչը հնարավորություն է ընձեռում ստեղծված գրությունները առցանց եղանակով եւ էլեկտրոնային ստորագրությամբ առաքել պետական տարբեր մարմինների: Առավել քիչ շահագործվող բաղադրիչներից են՝ Գույքի կառավարում, Թույլտվությունների տրամադրում, Ընդունելություններ եւ Խորհրդակցություններ բաղադրիչները: Համայնքի բյուջեի մասով առավել քիչ են կայքերում արտացոլված ծախսերի կատարողականները:

Մշտադիտարկման արդյունքները տրամադրվել են համայնքապետարաններին՝ թերությունները եւ բացթողումները լրացնելու եւ համայնքային կայքերի շահագործման արդյունավետությունը բարելավելու նպատակով:




***ԳՐԻՇԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***
***ՏՀԶՎԿ նախագահ***

# ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

Գտնվելով գործնական աշխատանքների արդյունքների համադրման փուլում՝ «Քաղաքացիների ձայնն ու գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրով սահմանված դասընթացներն անցկացվում են 52 խոշորացված համայնքներում: Դասընթացների շահառուները աշխատանքային խմբերն են, որոնք, համաձայն ծրագրի իրականացման պահանջների,համայնքային զարգացման եւ բարեկեցության ապահովման մասնակցային գործընթացի կրողն են եւ այդ գործընթացն իրականացնողը:

Շուրջ մեկ ամիս ընթացող եւ մինչեւ սեպտեմբեր ամիս տեւողությամբ նախատեսված դասընթացներին մասնակցող խմբերի աշխատանքներում ներգրավված են 18-30 տարեկան երիտասարդներ, յուրաքանչյուր խմբում՝ 10-12 մասնակից, որոնք ներկայացնում են ինչպես կրթական, մշակութային,սպորտային կառույցները, այնպես էլ տեղական իշխանության մարմինները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, համայնքային փոքր ձեռնարկություններ եւ այլն: Խմբերի ձեւավորման նախնական գործընթացը համայնքների հանրության ուշադրության կենտրոնում էր, ինչը պայմանավորված էր քաղաքացիների հետաքրքրությամբ եւ խմբերի աշխատանքներին մասնակցելու ցանկությամբ: Մասնակիցների ներգրավվածությունը որոշվում էր ըստ տվյալ համայնքի զարգացման եւ նորարարական ոլորտի առաջնահերթությունների եւ համարժեք նախաձեռնություններ պահանջող երիտասարդների իրազեկ պատրաստակամությամբ:

Աշխատանքային խմբերի մասնակիցների հավաքագրման գործում կարեւոր առաքելություն են ունեցել «Քաղաքացիների ձայնն ու գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի մարզային ինը համակարգողները: Նրանց էր վստահված երիտասարդների մասնագիտական ունակություններին, նրանց հետաքրքրությունների շրջանակին եւ տվյալ համայնքի կարիքներին անդրադառնալուն զուգահեռ՝ տեղական զարգացման հեռանկարների եւ հընթացս ձեւավորվող խմբի աշխատանքի արդյունքում իրատեսական արդյունքի կանխատեսումը, այդ աշխատանքի ուղղորդումը, թիմի ձեւավորմանը խթանելը եւ այլն: Որպես դասընթացավարներ հանդես են գալիս նախապես ընտրված թեմաներին քաջատեղյակ ոլորտի փորձագետները: Դասընթացները մասնավորապես մատուցվում են զբոսաշրջության, դրամական միջոցների հավաքագրման, մարդու իրավունքների, նորարարության եւ տեղական մակարդակով զարգացում ապահովելու եւ այլ կարեւորագույն թեմաներով:

Հաշվի առնելով յուրաքանչյուր համայնքի զարգացման ներուժը, հեռանկարային հնարավորությունները եւ դասընթացների շրջանակում մատուցված թեմաների համապատասխանությունը եւ կիրառելիությունը, աշխատանքային խմբերի երիտասարդ մասնակիցների առաջադրանքն էր՝ մշակել իրենց համայնքի զարգացումն ուրվագծող ուղիներ, նորարական ծրագրեր եւ դրանք ներկայացնել տեղական իշխանությունների, համայնքապետարանի գնահատականին:

Լավագույն ծրագիրը, որի իրականացման թիրախային ոլորտը զուգորդվում է խոշորացված համայնքների զարգացման հեռանկարին, կարժանանա համայնքի նախաձեռնությամբ ֆինանսավորման: Միեւնույն ժամանակ հարկ է նշել, որ համայնքը ֆինանսական միջոցները ձեռք է բերելու «Քաղաքացիների ձայնն ու գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրով սահմանված «քաղաքացու բյուջեի» շնորհիվ: Ծրագրի եւ տեղական իշխանությունների համագործակցության արդյունքում ձեւավորված ֆինանսավորման մեխանիզմի ներդրումը հնարավորություն կտա համայնքի բնակիչներին սեփական նախաձեռնությամբ իրագործել համայնքային զարգացման իրենց իսկ ստեղծած ծրագրերը:

Եվրոպական միության նախաձեռնած ծրագրի եւ տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության արդյունքում հստակ առանձնանում են խոշորացված համայնքների զարգացումն ապահովող գործողությունները, որտեղ իրենց ձայնի, ներուժի եւ ձեռքբերված գիտելիքների ու հմտությունների արդյունքում երիտասարդությունն է լինելու շարժիչ ուժը՝ բարեկեցության իր տեսլականը թելադրելով կառավարման մարմիններին:

***ՍՈՆԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ***

# ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ

Ապարանի քաղաքային այգում անցկացվեց միջոցառում, որի ընթացքում ներկայացվեց Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Քաղաքացու ձայնն ու գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագրի գլխավոր բաղադրիչներից մեկը՝ «Քաղաքացու բյուջեի» մեխանիզմը: Այն ուղղված է խոշորացված համայնքներում նորարարական եւ զարգացման ծրագրերը կյանքի կոչելու գաղափարային նախաձեռնություններին, որոնք միտված պետք է լինեն հզորացնելու Հայաստանի խոշորացված համայնքների կարողություններն: Նպատակն է մաս կազմել համայնքային էկո-տուրիզմի զարգացման նախաձեռնություններին, ընդլայնել քաղաքացիների եւ այցելուների բացօթյա ժամանցի հնարավորությունները եւ բարձրացնել քաղաքացիների դերն ու մասնակցությունը խոշորացված համայնքների զարգացման գործընթացներում:

Այս մեխանիզմի միջոցով քաղաքացիները կարող են դիմել ֆինանսավորման՝ համայնքային նախաձեռնություններ, նորարարություններ իրականացնելու կամ քաղաքացիների որոշակի սեգմենտի (երեխաների, ծերերի, հաշմանդամների համար, սպորտային կամ այլ ակումբներ համայնքի կիրառման համար, այդ թվում լայն հանրության հաճախման համար, օրինակ՝ խաղահրապարակներ, գրադարաններ, բացօթյա ստեղծագործական հարթակներ, եւ այլն) բարեկեցությանն ուղղված նոր ծրագրեր իրագործելու նպատակով: Քաղաքացու բյուջեները հայտարարված են, եւ քաղաքացիները կարող են ներկայացնել իրենց մրցակցային ծրագրերը դրամաշնորհների դիմելու նկատառումով: Ֆինանսավորման ենթակա ծրագրերը անաչառ եւ չեզոք կարգով ընտրում են համայնքային աշխատակիցները կամ ընտրող հանձնաժողովում ներգրավված ղեկավարները, մասնավոր սեկտորի եւ համայնքի ներկայացուցիչները:

Համայնքային զարգացմանն ուղղված այս նախաձեռնության ողջույնի իր խոսքում Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկին նշեց, որ քաղաքացու բյուջեն, թեեւ համեստ ու խրախուսական, բայց կարող է լինել մեծ ծրագրի նախնական կապիտալ: Ի թիվս բազմաթիվ այլ ծրագրերի, որոնք եւ՛ ներկայում իրականացվում են Հայաստանում, եւ՛ գտնվում են ՀՀ կառավարության եւ ԵՄ պատվիրակության քննարկման սեղանին, այս ծրագիրը նույնպես պետք է ծառայի Հայաստանի քաղաքացիների զարգացման տեսլականի իրականացմանը: Անդրադառնալով դիվանագիտական առաքելության ժամկետի ավարտին՝ դեսպանը նշեց, որ Ապարանը՝ իր երիտասարդների եռանդի եւ նորանոր նախաձեռնությունների շնորհիվ, մեծ հեռանկարներ ունի եւ կարող է հաջողություններ գրանցել ամենատարբեր ոլորտներում:

Արագածոտնի մարզպետ Դավիթ Գեւորգյանը կարեւորեց քաղաքացու դերը եւ գիտակցությունը համայնքի խնդիրների լուծման մոտեցումներում: Ողջունելով ծրագիրը, մարզպետն ընդգծեց, որ նման նախաձեռնություններին մասնակցելով՝ քաղաքացիներն էլ ավելի են ներգրավվում համայնքի կյանքին եւ դառնում են հաղորդակից առկա խնդիրների լուծման եւ զարգացման նոր ուղիներ մշակելու գործողություններին:

«Համայնքների ֆինանսիստների միավորում» կազմակերպության ղեկավար Վահան Մովսիսյանն ընդգծեց, որ դեռեւս շուրջ մեկ տարի առաջ, երբ «Քաղաքացու ձայնն ու գործողությունները Հայաստանի խոշորացված համայնքներում» ծրագիրը գտնվում էր նախապատրաստական փուլում, Եվրամիության հետ համատեղ քննարկումներն ընթանում էին քաղաքացիների գործողությունները խթանելու մեխանիզմներ մշակելու ուղղությամբ: «Թավշյա հեղափոխությունից» հետո քաղաքացիների քայլը դարձավ որոշիչ, հետեւաբար՝ նաեւ կարեւոր նախապայման քաղաքացիական ակտիվությունը խթանելու համար: Միայն ակտիվ եւ ստեղծարար քաղաքացիները կարող են փոփոխություն բերել մի շարք ոլորտներում, այդ թվում նաեւ խոշորացված համայնքների զարգացման նախաձեռնություններում:

Ապարանում մասնավորապես զբոսաշրջությունն է ուշագրավ ոլորտ նորարարական ծրագրեր իրագործելու տեսանկյունից: Իրենց ծրագրային գաղափարները ներկայացրեցին Օձուն, Մեղրաձոր, Սարապատ համայնքների երիտասարդ ներակայացուցիչները, որոնք հավակնություն են հայտնում արժանանալու «Քաղաքացու բյուջեով» նախատեսված դրամաշնորհին:

Միջոցառման եզրափակիչ մասը նվիրված էր մշակութային կատարումներին՝ համայնքի երիտասարդական խմբակների մասնակցությամբ:

«ՀԱՄԱՅՆՔ-ՀԱՄԱՏԵՂ» ամսաթերթ
Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ
Գրանցման վկայական՝ թիվ 03Ա063471, տրված՝ 06. 02. 2004 թ.

USAID FROM THE AMERICAN PEOPLE

Թերթը հրատարակվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետները միմիայն հեղինակներինն են եւ պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՎԱՀԱՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ՇԱՀԲԱԶՅԱՆ
ԱԲՐԱՀԱՄ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ
ՆՎԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԲՈՐԻՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ԱՅՎԱԶՈՎԱ
ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝ Խմբագիր
ԱՐԵՎՀԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեր հասցեն՝
Երեւան, Երվանդ Քոչարի 20, 4-րդ հարկ
Հեռախոս՝ 011 5313 97, 011 5313 98
Էլ.փոստ՝ info@cfoamail.am
Կայք՝ http://cfoa.am/

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում, ք.Երեւան, Արշակունյաց պող. 2
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ, տպաքանակը՝ 2000 օրինակ:
Թերթը տարածվում է անվճար: